901(47.925)
Մ-48

ՄԵԼԻՔ-ԲԱԽՇՅԱՆ

ՍԱՍՈՒՆՅԱՆ ՈՒԶԱՆԴ

ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳԻՐՆԵՐ

96Ա(47.925)
Ս-48

Ս. ՄԵԼԻՔ-ԲԱԽՇՅԱՆ

ԱՎԱՏՈՍ ՈՒԶԱՆԴ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԵՐԵՎԱՆ
1963

Академия наук Арм. ССР
БИБЛИОТЕКА
ՊԱՀԱՐԱՆ

901 (С 43)
М 47

«Հայ մատենագիրները» շարքից Ս. Տ. Մելիք-Բախշյանի «Փավստոս Բուզանդ» վերնագրով այս գրքույկը նվիրված է V դարի հայ նշանավոր մատենագիր Փավստոս Բուզանդին։ IV—V դարերի Հայաստանի քաղաքական ընդհանուր վիճակի համառոտ պատմական ակնարկից հետո, հեղինակը գրքույկի բնույթի սահմաններում, խոսելով Փավստոսի կյանքի ու նրա ստեղծագործական ժառանգությունը հանդիսացող «Հայոց պատմության» մասին, ցույց է տալիս, որ IV—V դարերի հայ գրականության, պատմագրության, փիլիսոփայության և գիտությունների այլ բնագավառների փայլուն դեմքերի՝ Մեսրոպ Մաշտոցի, Մովսես Խորենացու, Եղիշեի, Եղնիկ Կողբացու, Ղազար Փարպեցու, Ագաթանգեղոսի, Կորյունի և մյուսների շարքում իր պատվավոր տեղն ունի նաև հայրենասեր պատմիչ Փավստոս Բուզանդը։

СТЕПАН ТИГРАНОВИЧ МЕЛИК-БАХШЯН

ПАВСТОС БУЗАНД

(На армянском языке)
Армянское государственное издательство
(Айпетрат), Ереван, 1963

Հայաստանի և հայ ժողովրդի պատմությունը անհիշելի ժամանակներից սկսած սերտորեն առնչվել է հարևան երկրների ու ժողովուրդների պատմության հետ։ Այդ է պատճառը, որ հասարակական, քաղաքական, կուլտուրական և բազմաթիվ այլ երևույթներ, այս կամ այն ժամանակաշրջանում, ծագելով ու զարգանալով, պայմանավորվել են ոչ միայն Հայաստանի զարգացման ներքին, սեփական և առանձնահատուկ օրինաչափություններով, այլև արտաքին հանգամանքներով։ Հայ ժողովրդի համար հաճախ շատ կարևոր նշանակություն է ունեցել այն հանգամանքը, թե ի՛նչպիսի փոխհարաբերություններ են գոյություն ունեցել Հայաստանի և մյուս պետությունների միջև և ի՛նչպես են ընթացել այդ փոխհարաբերությունները տնտեսական, ռազմական, կուլտուրական և այլ բնագավառներում։

Հայաստանի աշխարհագրական նպաստավոր դիրքը և բնական հարստությունները միշտ էլ գրգռել են օտար տերությունների ու արշավող հորդաների ախորժակը։ Հայաստանը տիրելու ձգտումը մեծացավ հատկապես պատմական այն-

պիսի ժամանակաշրջանում, երբ արևելքում և արևմուտքում գոյացան աշխարհակալ ձգտումներ հետապնդող մեծ ու հզոր տերություններ, որոնց գոյակցությունը դարեր շարունակ զուգակցվում էր աշխարհավեր պատերազմների և մեծամեծ ավերումների ու արյունհեղությունների հետ։ Քաղաքական և ռազմական գերիշխանության համար պայքարող մրցակիցները մի ժամանակ հույներն ու աքեմենյաններն էին, մի ուրիշ ժամանակ՝ հռոմեացիներն ու պարթևները, ապա՝ Պարսկաստանում իշխող Սասանյաններն ու Բյուզանդական կայսրությունը, հետո՝ Բյուզանդիան ու Արաբական խալիֆայությունը, և այսպես շարունակ։ Սակայն մրցակիցների կազմի շարունակաբար փոփոխվելը երկար ու ձիգ դարերի ընթացքում՝ ոչնչով չփոխեց Հայաստանի դրությունը կամ չթեթևացրեց հայ ժողովրդի ծանր վիճակը, որվհետև արևելյան ու արևմտյան տերությունների համար Հայաստանը միշտ էլ հանդիսացել է որպես մի միջանկյալ երկիր, և կողմերի բախումները շատ հաճախ անխուսափելիորեն տեղի են ունեցել նրա տերիտորիայում։ Այսպիսով, երբեմն շատ մեծ ոլորտներ ընդգրկող երկարատև ու աշխարհավեր պատերազմների մահաբեր փոթորիկներն անցնելով Հայաստանի վրայով, ստիպել են հայ ժողովրդին՝ իր շահերին ու կամքին միանգամայն հակառակ, կրելու նրա դառնություններն ու ամենածանր հետևանքները։

III դարի 20-ական թվականներին հարևան Պարսկաստանում տեղի ունեցան այնպիսի դեպքեր, որոնք խորապես անդրադարձան նաև Հայաստանի արտաքին քաղաքականության վրա։ Այդ ժամանակ խիստ թուլացել և իր մայրամուտն էր ապրում պարսկական Պարթևական պետությունը։ Պարթևների վիճակն ավելի ծանրացավ այն ժամանակ, երբ նրանց դեմ իրենց ուժերը միավորեցին Պարսկաստանի ֆեոդալականացող ազնվականները, որոնց այն ժամանակ գլխավորում էին Սասանյան տոհմի ամենաակտիվ ներկայացուցիչները։ Վերջիններիս նախաձեռնությամբ Պարթևների դեմ ձեռնարկված ապստամբությունը վերջացավ Պարթևական դինաստիայի անկումով և 226 թվականին նրա փոխարեն Պարսկաստանում իշխանությունն անցավ Սասանյաններին, որոնք ստեղծեցին մի նոր, էլ ավելի հզոր միապետություն։

Սասանյանները հենց սկզբից փորձում էին վերականգնել հին Աքեմենյան պետության հզորությունը իր նախկին սահմաններով։ Դրա համար էլ նրանք մի առանձին տենդով վեր էին բարձրացնում հին պարսկական կրոնն ու կուլտուրան և ընդհակառակը՝ մերժում ու հալածում էին հելլենիստականը։ Քանի որ Սասանյան Պարսկաստանի հզորացմանը զուգընթաց թուլանում և դեպի անկումն էր գնում Հռոմեական կայսրությունը, ուստի այդ ժամանակ Հայկական թագավորության անկախությունն ու հայ ժողովրդի ֆիզիկական գոյու-

թյունը մեծապես վտանգվում էր ոչ այնքան Հռոմի, որքան Պարսկաստանի կողմից։

Հայկական թագավորության նկատմամբ Սասանյան Պարսկաստանի ունեցած թշնամանքը հիմնականում արդյունք էր Սասանյանների օր ավուր աճող նվաճողական ձգտումների։ Սակայն դրան պետք է ավելացնել նաև այն, որ Սասանյանները բռնությամբ տիրելով պարսից Արշակունիների գահը Պարսկաստանում, չէին հանդուրժում նաև նրանց հայ արյունակիցների գոյությունը Հայաստանում։

Միանգամայն հասկանալի է, որ քաղաքական այսպիսի խիստ լարված պայմաններում, թուլացած Հռոմին ձեռնտու էր իր վտանգավոր մրցակից Պարսկաստանի սահմանագլխում ունենալ շատ թե քիչ ուժեղ հայկական թագավորություն։ Դրա համար էլ զարմանալի չէ, որ Սասանյանների ամբողջ գոյության ընթացքում, կամա թե ակամա, հռոմեացիները հաճախ դաշնակցում էին Հայաստանի հետ ընդդեմ Պարսկաստանի։

Իրենց գահակալության առաջին իսկ տարիներից սկսած, Սասանյանները հանդես եկան նվաճողական ընդարձակ ծրագրերով։ Դեպի Հայաստան, Միջագետք ու հարակից շրջանները կատարված պարսկական առաջին արշավանքները հաջողությամբ ետ էին մղվում Հռոմի ու նրա հետ դաշնակցած մյուս պետությունների ռազմական ուժերի կողմից։ Պարսկաստանի համար ավելի խայտառակ եղավ 295 թվականին Սասանյան Ներսեհի սկսած պատերազմը, որը վերջացավ նրա պարտությամբ։ Հայկական զորքերը Հռոմեական օգնական լեգեոնների հետ միասին այնպիսի մի ջարդ տվեցին թշնամուն, որ Ներսեհը հազիվ կարողացավ ազատվել գերի ընկնելուց։ Իսկ երեք տարի հետո, 298 թվականին, հայերի ու հռոմեացիների հարկադրանքով պարսիկները ստիպված եղան ստորագրելու Մծբինի քառասնամյա հաշտության պայմանագիրը։ Այս պայմանագիրը ոչ միայն երաշխավորում էր Հայկական թագավորության ամբողջականությունն ու անկախությունը, այլև գոնե որոշ ժամանակ, ապահովում էր խաղաղությունը Արևելքում։

Քառասնամյա այս խաղաղությունը նպաստեց ինչպես Հայաստանի ռազմա-տնտեսական հզորացմանը, այնպես էլ նրա սոցիալական հարաբերությունների զարգացմանն ու առաջընթացին։ Հասարակական հարաբերությունների մեջ ֆեոդալիզմի հաղթանակը հրամայաբար պահանջում էր վերափոխում մտցնել նաև տիրապետող գաղափարախոսության մեջ։ Նախկին հեթանոսական պաշտամունքը, որ ավելի համապատասխանում էր ստրկատիրության ժամանակներին, այժմ իր տեղը հարկադրաբար զիջեց քրիստոնեությանը, որը դարձավ ֆեոդալական վերնախավի գաղափարական զենքը շահագործվողներին հպատակության մեջ պահելու համար։ 301 թվականին քրիս-

տոնեությունը պետական կրոն հռչակվելուց հետո, ֆեոդալական հարաբերությունների զարգացման ու նրա հիմքերի ամրապնդման համար Հայաստանում ստեղծվեցին ավելի մեծ հնարավորություններ։ Հայերն ընդունելով քրիստոնեությունը, վերջնականապես սահմանազատվեցին նաև պարսկական զրադաշտական կրոնից։ Այս վերջին հանգամանքը շատ կարևոր էր, որովհետև զրադաշտությունն ամեն ձևով խրախուսում և արդարացնում էր Սասանյանների նվաճողական քաղաքականությունը։

309 թվականին պարսկական գահն անցավ Շապուհ II Երկարակյացի ձեռքը, որն իշխեց մինչև 379 թվականը։ Շապուհի գահակալության տարիներին էլ (338 թ.) վերջանում էր Մծբինի քառասնամյա հաշտության պայմանագրի ժամկետը։ 330-ական թվականներին գնալով ավելի էին սրվում պարսկա-հռոմեական հարաբերությունները և պատերազմը նրանց միջև դառնում էր անխուսափելի։ Շապուհը իր գահակալության առաջին իսկ տարիներից սկսեց եռանդուն կերպով նախապատրաստվել ոչնչացնելու Մեծբինի ստորացուցիչ դաշնագիրը և կատարելու նորանոր նվաճումներ։ Եվ Շապուհը, չսպասելով հաշտության ժամկետի վերջանալուն, 337 թվականին ահռելի բանակով ներխուժեց Հայաստան ու Միջագետք։ Պարսից բռնակալը որոշել էր մեկ ընդմիշտ հաշիվները մաքրել Հայաստանի հետ, նվաճել ու ստրկացնել հայ ժողովրդին։ Հայ ժողովրդի կյանքը դուրս եկավ խաղաղ հունից, սև ամպերը կրկին սփռվեցին հայկական երկնակամարի վրա, հայ շինականը իր երկիրը և արդար վաստակը պաշտպանելու համար ստիպված մի կողմ դրեց բահն ու արորը և զենք վերցրեց։ Սկսվեցին անհավասար պայքարի ու հերոսացման ժամանակներ։

Պարսկա-հռոմեական այս պատերազմը ընդմիջումներով շարունակվեց մինչև IV դարի 80-ական թվականները։ Հայաստանը որպես պատերազմի հիմնական թատերաբեմերից մեկը ենթարկվեց մեծամեծ ավերածություններ և կրեց նյութական ու մարդկային հսկայական կորուստներ։ Սասանյան Պարսկաստանի հաղթանակը Հռոմի դեմ ակնառու էր։ 387 թվականին երկու կողմերի միջև կնքվեց հաշտության պայմանագիր, որը խիստ բացասաբար անդրադարձավ Հայաստանի ճակատագրի վրա. ուրիշ շատ կետերի հետ մեկտեղ այնտեղ արձանագրվում էր Հայաստանի բաժանումը երկու տերությունների միջև։ Սա Հայաստանի առաջին բաժանումն էր։

Պայմանագրի կնքումից հետո, սկզբում, Հայաստանի երկու մասերում էլ հայ Արշակունի թագավորները պահպանում էին իրենց ներքին իրավունքները վասալական պարտականություններով։ Բայց նվաճողներն ամեն միջոց գործադրում էին հայերի ինքնուրույնության այդ փշրանքներն էլ ոչնչացնելու և հնարավոր բոլոր միջոցներով հայ ժո-

ղովրդին իրենց հետ ձուլելու համար։ Հայ Արշակունիները, որոնք Հայաստանի բաժանումից հետո իշխում էին ինչպես արևելյան, այնպես էլ արևմտյան մասերում, գնալով զրկվում էին իրենց իրավունքներից և իշխանության ֆունկցիաներից։ Արևմտյան Հայաստանում 391 թվականին, իսկ Արևելյան Հայաստանում 428 թվականին Արշակունիների թագավորության ոչնչացումից հետո, երկիրն ամբողջովին կորցրեց իր ինքնուրույնությունը և մտցվեց հռոմեական ու պարսկական տիրապետությունների մեջ որպես նրանց բաղկացուցիչ մասեր։ Հայ ժողովրդի համար այսուհետև սկսվում էր պատմական մի նոր ժամանակաշրջան, իր գոյությանը այժմ արդեն շատ մոտիկից սպառնացող վտանգի դեմ պայքարի ժամանակաշրջան։

Հայաստանի պետական ու քաղաքական անկախության բացակայության պայմաններում, երբ ամեն ինչ ենթարկված էր հույների ու պարսիկների կամքին, երբ սեփական երկրում թելադրողն ու տնօրինողը օտարն էր, հայոց լեզուն, կուլտուրան ու պաշտամունքը անաղարտ պահելու խնդիրը դառնում էր առավել առաջնակարգ ու հասարակական բոլոր դասակարգերին ու խավերին հուզող, անհ՝ չնդստացնող խնդիր։ Այդ երևույթը իր ծայրակետին հասավ մանավանդ IV—V դարերում, երբ ոչ միայն հայոց լեզուն, կուլտուրան, այլ հենց ինքը ժողովուրդը դեմ առ դեմ

կանգնեց ֆիզիկական ոչնչացման ու ձուլման ահավոր վտանգի առաջ, մի վտանգ, որը հետևողականորեն նյությում էին պարսից ազնվականներն ու զրադաշտական հոգևորականները՝ զինվորական վերնախավի հետ միասին, առաջնորդ ունենալով ժամանակի այնպիսի արյունարբու բռնակալների, ինչպիսիք էին Շապուհ II-ը, Հազկերտ II-ը և մյուսներ։

IV—V դարերը հայ ժողովրդի համար հանդիսացան մահու և կենաց, անհավասար պայքարի ու դաժան մաքառումների ժամանակներ։ Այժմ կյանքը ինքն էր թելադրում իր պահանջները. իսկ կյանքի պահանջն էր ամբողջ ուժով ոտքի ելնել օտար բռնակալների դեմ, փրկել ժողովրդի դարավոր կուլտուրան, լեզուն, ազգային ոգին, սովորություններն ու հավատալիքները, մի խոսքով՝ այն ամենը, ինչը բնորոշում էր մի ժողովրդի ինքնությունը։

Այս ծանր օրերին միայն զենքով չէր որ ժողովուրդը պետք է դեմ գնար ստեղծված վտանգին, զենքի հետ հավասար դեր ունեին կատարելու նաև գրիչն ու գաղափարական պայքարը։ Եվ ահա IV դարի վերջին և V դարի սկզբներին ազգայինազատագրական պայքարի մեջ թշնամու ստրկացնող բանակների ու մոգերի ամբոխների դեմ հայկյան նետ ու աղեղի հետ ուժգնորեն շառաչել սկսեց նաև գրավոր, գաղափարական պայքարը։

Հայկական նոր գրերի ստեղծումը մեծ չափով

նպաստեց հայ նոր գրականության զարգացմանը, գրականություն, որն իր մեջ ընդգրկելով գիտության ամենաբազմազան բնագավառները և ունենալով դարերի տրադիցիա, տոգովրված ջերմ հայրենասիրական զգացմունքներով, կոչված էր նոր ուժով բորբոքելու ժողովրդի մեջ այդ զգացմունքները՝ հանուն ինքնուրույնության, հանուն պայքարի ու հաղթանակի, հանուն լավագույն ապագայի նկատմամբ հաստատակամ հավատի։

IV—V դարերի հայ գրականության, փիլիսոփայության, պատմագրության և գիտության այլ և այլ բնագավառների փայլուն դեմքերի՝ Մեսրոպ Մաշտոցի, Մովսես Խորենացու, Եղիշեի, Եղնիկ Կողբացու, Ղազար Փարպեցու, Ագաթանգեղոսի, Կորյունի և մյուսների կողքին իր պատվավոր տեղն ունի նաև հայրենասեր պատմիչ Փավստոս Բուզանդը։

***

Միջնադարյան մի քանի հայ հեղինակների նման Փավստոս Բուզանդը և նրա «Պատմութիւն Հայոց»-ը ևս հայագիտության մեջ տեղիք են տվել բազմապիսի վեճերի ու տարակարծությունների։ Այդ վեճերի հիմնական պատճառը մի կողմից իրեն՝ Բուզանդին վերաբերող կենսագրական տվյալների բացակայությունն է, իսկ մյուս կողմից՝ նրա աշխատության հետ կապված մի քանի բարդություններ, որոնք զգալիորեն դժվարացնում են հանգելու հաստատուն ու վերջնական եզրակացությունների։ Հենց այդ է պատճառը, որ մեր այս հեղինակի մասին գրված բազմաթիվ ուսումնասիրությունների մեջ արտահայտվել են շատ ու բազմապիսի իրարամերժ կարծիքներ և տեսակետներ։

Մասսայական ընթերցանության համար ներկայացվող այս գրքույկում խոսել Փավստոս Բուզանդի հետ կապված բանասիրական կարգի բոլոր վեճերի ու դրանց շարժառիթների մասին՝ մեր նպատակից դուրս է։ Սակայն մեր հեղինակի մասին մեկ ամբողջական պատկերացում տալու համար, անհրաժեշտ ենք համարում ընթերցողներին համառոտակիորեն ծանոթացնել վիճելի հարցերի ընդհանուր բնույթին։

Փավստոս Բուզանդի ու նրա «Պատմութիւն Հայոց»-ի շուրջը եղած վեճերը հիմնականում պտտվում են երկու հարցի շուրջը.

1. ազգությամբ ո՞վ է Փավստոս Բուզանդը, ե՞րբ և ի՞նչ լեզվով է գրել նա իր գիրքը, և

2. Փավստոսի Պատմությունը արդյո՞ք ամբողջությամբ է հասել մեզ, թե կիսատ։

Ուսումնասիրողների մի մասը (Մ. Չամչյան, Մ. Էմին, Ն. Բյուզանդացի, Ն. Ադոնց, Սեն—Մարտեն և ուրիշներ) հակված է ապացուցելու, որ «Պատմութիւն Հայոց»-ի հեղինակը նրանում մի քանի անգամ հիշատակված հույն եպիսկոպոս Փավստոսն է, որը Հայոց կաթողիկոս Ներսես

Մեծի (353—373 թթ.) խորհրդականն էր ու գործակիցը։ Ըստ Չամչյանի և ուրիշների, նշված աշխատությունը գրվել է վերոհիշյալ անձնավորության կողմից IV դարի վերջերում հունարեն լեզվով և միայն V դարում այն թարգմանվել է հայերեն։ Գիտնականների մյուս խումբը (Դ. Ինճիճյան, Հ. Տաշյան, Հ. Գելցեր, Ստ. Մալխասյանց, Մ. Աբեղյան և ուրիշներ) գտնում է, որ այս Պատմության հեղինակը հայ է, որն իր աշխատությունը գրել է հայերեն, V դարում, սակայն գրքին մեծ հեղինակություն տալու և այլ նկատառումներով այն վերագրել է իր նկարագրած դեպքերի ժամանակակից հույն եպիսկոպոս Փավստոսին։ Մանրամասնությունների մեջ չխորանալու համար, միայն նշենք, որ այժմ ուսումնասիրողների մեծ մասը հաստատապես պնդում է, որ Փավստոս Բուզանդի «Պատմութիւն Հայոց»-ը գրվել է V դարի կեսերին, հայ հեղինակի ձեռքով և հայերեն լեզվով։

«Պատմութիւն Հայոց»-ի հեղինակը հակառակ ժամանակի սովորության, իր աշխատության մեջ շատ մեծ տեղ է տվել ժողովրդական բանահյուսությանը ու գիրքը շարադրել վիպագրելու եղանակով։ Եվ քանի որ ժողովրդական ստեղծագործության մեջ կային նաև այնպիսի պատումներ, որոնց արմատները գնում էին մինչև հեթանոսություն և կամ ունեին այնպիսի բովանդակություն, որ հակասում էր հայոց եկեղեցու սկզբունքներին, ուստի աշխատության իսկական հեղինակը այն վերագրել է մի ուրիշի, որովհետև նա գիտեր, որ հայկական եկեղեցին նման մի հանդգնություն չէր կարող ներել հայ գրողին, և հակառակը, չէր էլ կարող իր կամքը թելադրել մի օտար մարդու, մանավանդ որ այդ մարդն ապրել է իրենից մոտ մեկ դար առաջ[1]։ Ինչ էլ, որ լինի, «Պատմութիւն Հայոց»-ը մեզ է հասել Փավստոս Բուզանդի անունով, ուստի այդպես էլ հայտնի է նա մատենագրության մեջ։

***

Փավստոս Բուզանդի ու նրա գրական ժառանգության հմուտ մասնագետ ակադեմիկոս Ստ. Մալխասյանցը գտնում է, որ Փ. Բուզանդը, որպես Մեսրոպ Մաշտոցի ավագ աշակերտներից մեկը, կրթությունը ստացել է հենց իր հայրենիքում՝ Հայաստանում։ Նա V դարի մյուս մատենագիրների նման ուսումը շարունակելու համար արտասահման չի գնացել։ Բուզանդը կրթությունն ստանալուց հետո եռանդուն կերպով սկսում է գրի առնել ժողովրդական ավանդություններն ու առասպելները, որոնց նկատմամբ նա անսահման սեր էր տածում դեռևս մանկությունից։ Հե-

1 Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, Գիրք առաջին, Երևան, 1944, էջ 168—169։

տաքրքիրն այն է, որ Բուզանդը իր լսած առասպելներն ու ավանդությունները գրի է առնում համարյա այնպես, ինչպես ինքը լսել էր, սահման չդնելով ոչ-ճշմարիտի ու ճշմարիտի, առասպելի ու իրական եղելության միջև։ Եվ այսպես, ժամանակի ընթացքում, նրա մոտ գոյացել է հսկայական նյութ, որը մշակելով ու դասավորելով, դարձրել է այն գիրքը, որ մեզ հայտնի է «Փաւստոսի Բուզանդացւոյ պատմութիւն Հայոց» կամ «Բուզանդարան պատմութիւնք» անունով։

Փավստոս Բուզանդով հետաքրքրվել են դեռևս V դարում։ Նրա մասին՝ օրինակ՝ խոսում է V դարի նշանավոր պատմիչ Ղազար Փարպեցին։ Որպես կանոն, թե հին և թե նոր ժամանակներում, մեր պատմիչի «Բուզանդ» անունը ուսումնասիրողները մեծ մասամբ մեկնաբանել են բյուզանդացի՝ Բյուզանդիայում կրթություն ստանալու իմաստով։ Բոլորովին ուրիշ ստուգաբանություն է տալիս ակադեմիկոս Ստ. Մալխասյանցը։ Նա Փավստոս Բուզանդի Պատմության աշխարհաբար թարգմանության ծանոթության մեջ նշում է, որ Բուզանդ կամ Բյուզանդ բառերը ամենևին էլ կապ չունեն Բյուզանդիոն կամ Բյուզանդիա անունների հետ։ Այդ բառն ունի հնդեվրոպական երկու արմատ՝ բ ու ե ղ ա ն դ, որ նշանակում է եղելությունների, զրույցների բացատրիչ, մեկնիչ, ուրեմն և «... Բուզանդ բառը ոչ թե անձի հատուկ անուն է, այլ աշուղական կոչում». այստեղից էլ հետևում է,

որ բուզանդարան նշանակում է բուզանդների ժողովածու, զրույցների ժողովածու, մեկնությունների ժողովածու և այլն[1]։ Եվ իրոք, Բուզանդի գրքում բավական մեծ տեղ են գրավում ժողովրդական զրույցները և ավանդությունները։

Փավստոս Բուզանդի գրքը Ագաթանգեղոսի աշխատությունից հետո մեսրոպատառ հայերենով գրված երկրորդ գիրքն է, որ կրում է «Պատմութիւն Հայոց» վերնագիրը։ Սակայն եթե այս երկու հեղինակների գրվածքները ըստ բովանդակության համեմատենք իրար հետ, ապա կտեսնենք, որ Բուզանդի գիրքը փաստորեն առաջինն է, որովհետև այնտեղ կատարվել է Հայաստանի քաղաքացիական պատմության շարադրման առաջին փորձը, ընդգրկելով մի որոշակի ժամանակաշրջան։ Այն ինչ Ագաթանգեղոսին հետաքրքրել է փաստորեն մեկ հարց՝ Հայաստանում քրիստոնեության տարածման պատմությունը, և նրա գրքում հիմնականում շարադրված է հենց այդ թեման։

Բուզանդի Պատմությունը բաժանվում է չորս մասերի, որոնց հեղինակն անվանում է դպրություններ և որոնք համարակալված են 3, 4, 5, 6։ Առաջին երկու դպրությունների բացակայությունը տեղիք է տվել բազմաթիվ վեճերի։ Վիճաբանողներից ոմանք գտնում են, որ դրանք գրված են եղել,

1 Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, թարգմանություն, ներածություն և ծանոթություններ, ակադ. Ստ. Մալխասյանցի, Երևան, 1947, էջ 309—310։

բայց հետագայում կորել են, իսկ ոմանք էլ պնդում են, որ հեղինակն ընդհանրապես այդ մասերը չի գրել Ագաթանգեղոսին չկրկնելու համար, որովհետև այն, ինչի մասին, որ ինքը պետք է գրեր առաջին երկու դպրություններում, Ագաթանգեղոսի կողմից արդեն գրված էին։ Յուրաքանչյուր դպրությունը բաժանվում է վերնագրեր կրող առանձին գլուխների։ Բացի այդ՝ գիրքն ունի նաև առաջաբան։

Իր ժամանակի մյուս հեղինակների նման, Բուզանդը այդ գրքի համար օգտագործել է որոշ սկզբնաղբյուրներ, որոնք կարելի է բաժանել երկու խմբի՝ գրավոր և բանավոր։

Ամենից առաջ նշենք, որ Բուզանդը, որպես բարեպաշտ քրիստոնյա, որպես իր ժամանակի ծնունդ, ունի կրոնական աշխարհայեցողություն։ Նրա համար եկեղեցուց և քրիստոնեությունից դուրս ուրիշ հեղինակություն և ճշմարտություն, ուրիշ չափանիշ գոյություն չունի։ Այդ պատճառով էլ նրա համար որպես առաջնակարգ սկզբնաղբյուր են հանդիսանում Աստվածաշունչը և եկեղեցական մի քանի գրքեր, որոնցից մեր պատմիչը բավականին շատ մեջբերումներ է կատարել։ Բայց միայն դրանցով Փավստոսը պատմություն գրել չէր կարող։ Եվ իրոք, նա կրոնական գրականությունից բացի, օգտվել է նաև պատմագիտական կարգի սկզբնաղբյուրներից, ամենից առաջ հրապարակի վրա եղած հայերեն գրքերից։ Ներկայումս արդեն ապացուցված է, որ Բուզանդը լայնորեն օգտագործել է Ագաթանգեղոսի «Պատմութիւն Հայոց»-ը և Կորյունի «Վարք Մաշտոցի»-ն։ Այդ հեղինակներից Բուզանդը երբեմն բերում է հատվածներ, կամ անհրաժեշտությունից ելնելով, ուղղակի վերապատմում է նրանց ասածները այս կամ այն հարցի վերաբերյալ։ Վերոհիշյալ հեղինակներից օգտվելու հանգամանքն էլ իրավունք է տվել բանասերներին եզրակացնելու, որ Բուզանդի գիրքը հանդես է եկել Ագաթանգեղոսի ու Կորյունի գրքերից հետո, այսինքն V դարի 70-ական թվականներին։ Ինչպես տեսնում ենք, մեր պատմիչի օգտագործած գրավոր հիշատակարանները այնքան էլ շատ չեն, դրա համար էլ նա նյութի պակասը լրացրել է բանավոր աղբյուրների օգտագործմամբ։ Օգտագործած գրավոր աղբյուրների սակավությունը Բուզանդի մոտ երկու պատճառ ունի. մեկ այն, որ մեսրոպատառ այբուբենը դեռ նոր էր ստեղծվել և հայկական գիտական մատենագրությունը դեռ չէր հարստացել շատ գործերով, մյուսը՝ Բուզանդի տեղական կրթությունը, այնուամենայնիվ, որոշ դժվարություններ էին ստեղծում օտար լեզվով գրականության լայն օգտագործմանը։ Չնայած դրան, Փավստոս Բուզանդի Պատմությունը հայ մատենագրության մեջ մնում է որպես ամենալավագույն սկզբնաղբյուրներից մեկը և շատ բարձր է գնահատվում որպես և՛ պատմագիտական, և՛ գրական բարձրարժեք մի գործ։

Չափազանցություն չէ, եթե ասենք, որ Բուզանդը իր գրքում ավելի մեծ տեղ հատկացրել է բանավոր սկզբնաղբյուրներին։ Դժվար է ասել, թե դրա պատճառը միայն գրավոր սկզբնաղբյուրների սակավությունը կամ դրանց Բուզանդի համար անմատչելիությունն էր։ Ի՞նչ իմանանք, գուցե հեղինակը հենց գիտակցաբար է առաջնությունը տվել ժողովրդական խոսքին ու կատարել բանահավաքի պատվավոր ու դժվարին գործը հին ժամանակներում։ Իր գրքի համար բանավոր տեղեկությունները նա հավաքել է ժողովրդի բերանից՝ բանասացներից, գուսաններից, իր նկարագրած դեպքերի ժամանակակից մարդկանցից և այլն։ Ահա այս երկու կարգի սկզբնաղբյուրների հիման վրա է Փավստոս Բուզանդը շարադրել իր Պատմությունը, մեզ համար պատմագիտական և գրականագիտական հետաքրքրություն ներկայացնող այդ աշխատությունը։

Փավստոս Բուզանդը մեր այն հեղինակներից է, որ, ինչպես իր, այնպես էլ հետագա ժամանակներում ըստ արժանավույն չի գնահատվել։ Դրա պատճառը ամենից առաջ այն է, որ Բուզանդը իր գրքում մեծ տեղ տալով ժողովրդական ստեղծագործություններին և լայն չափով հենվելով դրանց վրա, փաստորեն շեղվել է պատմագրության սովորական սկզբունքներից ու գրել է կես պատմագիտական կես գեղարվեստական մի աշխատություն։ Բայց որովհետև մինչև XIX դարը նրա աշխատությանը մոտեցել են զուտ պատմագիտական առումով, չնկատելով նրա առավելությունները, սկսել են թերագնահատել Բուզանդի աշխատությունը կամ վատաբանել նրա հեղինակին։ Այժմ հայագիտության մեջ Բուզանդը և նրա գիրքը միանգամայն այլ տեսանկյունով են դիտվում ու գնահատվում։ Բուզանդի աշխատությունը զուտ պատմագիտական երկ չէ, ինչպես, օրինակ, Խորենացու, Փարպեցու և ուրիշների երկերը։ Այն ավելի շուտ նման է Զենոբ Գլակի, Հովհան Մամիկոնյանի և մյուսների գործերին, որոնց մեջ գերակշռում են ժողովրդական զրույցները և պատմությունը շարադրված է վիպագրելու եղանակով։ Ուրեմն միանգամայն հասկանալի է, որ այն պահանջները, որ ներկայացվում են, այսպես ասած, զուտ պատմագիտական աշխատություններին, չեն կարող ներկայացվել Փավստոսի աշխատությանը, հետևաբար, այն գնահատականը, որ տրվում է առաջիններին, չի կարելի տալ վերջինին, որովհետև դրանք իրենց բովանդակությամբ և իրենց արժեքով տարբեր տիպի աշխատություններ են։ «Պատմութիւն Հայոց»-ի հեղինակը խորապես գիտակցելով իր վարմունքը, իր առաջ նպատակ է դրել հավաքել և, գրական որոշ մշակման ենթարկելուց հետո, շարադրել իր լսած ու իրեն մատչելի ժողովրդական այն զրույցներն ու պատմությունները, որոնք, ստեղծվելով իրենից ընդամենը մի քանի տասնամյակ առաջ, դեռ իր օրերում էլ

լայնորեն տարածվում էին ժողովրդի մեջ, բովանդակելով Հայաստանի ու հայ ժողովրդի համար ճակատագրական նշանակություն ունեցող IV դարի հերոսական դեպքերի վիպական պատկերը։ Միջնադարյան հայ հեղինակներից շատ քչերն են վարվել Բուզանդի նման։ Ժողովրդական ստեղծագործությունների մեծ արժեքը հասկացել են շատ քչերը։ Ահա դրա համար է, որ մեր պատմիչը անցյալի շատ հին մատծողներց բարձր է կանգնած մի ամբողջ գլխով. նրա հավաքած զրույցներից ու պատմություններից մենք կարողանում ենք որոշ պատկերացում կազմել IV դարի Հայաստանի մասին։ Բուզանդը ժողովրդական զրույցները գրի է առել համարյա այնպես, ինչպես դրանք լսել է ինքը, նա դրանց բովանդակությանը չի միջամտել, որի պատճառով էլ նրա հաղորդած պատմություններն ու զրույցները մեզ են հասել իրենց անարատությամբ։ Հենց այդ է պատճառը, որ Բուզանդի գրքում փաստորեն շարադրված են իրենց բովանդակությամբ և ոյուժեով տարբեր, իրար հետ չկապվող պատմություններ։ Դեռ ավելին. նրա մոտ կան նույնիսկ այնպիսի պատմություններ, որոնք կամ կապ չունեն Հայաստանի հետ և կամ վերաբերում են ուրիշ երկրների ու անձնավորությունների, որոնք, սակայն, ժողովրդի կողմից վերագրվել են Հայաստանին կամ հայ հերոսներին։ Որ իսկապես Բուզանդի նպատակը չի եղել շարադրել Հայաստանի պատմությունը իր իսկական իմաստով, այդ

երևում է նաև նրանից, որ նա չի ցանկացել իր լսած պատմությունները ստուգել ուրիշ աղբյուրներով, ճշգրտել դրանց ժամանակը և այլ հարցեր։ Դրա համար էլ զարմանալի չէ, որ Փավստոսի Պատմության մեջ համարա բացակայում է ժամանակագրությունը, ինչպես նաև դեպքերի հաջորդական շարադրումը։ Մի տեղ Փավստոսը ինքն էլ է հաստատում, որ իր գրվածքը առանձին պատումների ժողովածու է։ Նա իր գրքի 3-րդ դպրության վերջում բացեիբաց ասում է, որ ավարտվեց երրորդ դպրությունը, որ բաղկացած է 21 պատմություններից (երրորդ դպրությունը հենց 21 գլուխներից է բաղկացած)։ Ուրեմն, դրանցից յուրաքանչյուրը հեղինակը համարում է առանձին պատմություն, որոնց մեջ օրգանական ներքին կապի անհրաժեշտությունն այնքան էլ պարտադիր չէր։

Այժմ դառնանք Փավստոս Բուզանդի Պատմության բովանդակությանը և տեսնենք թե ինչ արժեք ունի նա մեզ՝ 1500 տարի հետո ապրողներիս համար։

Եթե մեկ անգամ էլ մենք վերհիշենք V դարում Հայաստանի համար ստեղծված քաղաքական ծանրը իրադրությունը, երբ հայկական ինքնուրույն պետականության ոչնչացումից հետո մեծ վտանգ էր ստեղծվում հայ ժողովրդի ֆիզիկական գոյության համար, ապա ավելի հասկանալի կլինի, որ Բուզանդի գիրքը իր ժամանակակից մյուս հեղինակների աշխատությունների նման կոչված էր

ծառայելու ժողովրդի մեջ հայրենասիրություն պրոպագանդելու մեծ ու աղնիվ գործին։

Փավստոս Բուզանդի Պատմությունը ընդգրկում է համեմատաբար ոչ մեծ ժամանակաշրջան, բովանդակելով ընդամենը մի հիսուն տարվա պատմություն։ Գիրքն սկսվում է Տրդատի որդի Խոսրով Կոտակի (331—338 թթ.), հայոց կաթողիկոս Արիստակեսի մահվան (325—333 թթ.) ու նոր կաթողիկոս Վրթանեսի (333—334 թթ.) աթոռակալության դեպքերով ու հասցվում մինչև 387 թվականը, այսինքն մինչև Հայաստանի առաջին բաժանումը։ Գիրքը իր մեջ հարուստ և բացառիկ արժեքավոր տեղեկություններ է պարունակում IV դարի ֆեոդալական Հայաստանի քաղաքական պատմության ու ներքին կյանքի, նախարարական սիստեմի, դասակարգային ու ներդասակարգային պայքարի ու փոխհարաբերությունների, եկեղեցական ու կրոնական հարցերի, ժողովրդի կենցաղի ու սովորությունների, հավատալիքների ու բազմաթիվ այլ հարցերի մասին։ Այս տեղեկությունները մեզ հասած գրավոր հիշատակությունների մեջ մնում են որպես ամենաառաջիններն ու ամենաարժեքավորները, որոնք մեզ այսօր հնարավորություն են տալիս որոշակի պատկերացում կազմել 1500 տարի առաջվա Հայաստանի ու հայ ժողովրդի մասին և հաղորդակից լինելու մեր նախնիների կենցաղին, մտավոր ունակություններին, սովորություններին և այլն։

Բուզանդի գրքում որոշակիորեն առաջադրված են մի քանի թեմաներ, մի քանի սյուժեներ, որոնցից յուրաքանչյուրի նկատմամբ պատմիչը ցուցաբերել է առանձին մոտեցում և առանձին վերաբերմունք։ Նրա ուշադրությունը հիմնականում կենտրոնացել է Հայոց եկեղեցու և հոգևորականության, Արշակունիների և հայկական արքունիքում ու ապա երկրի կյանքում առաջատար դեր խաղացող Մամիկոնյան նախարարական տան վրա։ Այս երեք բնագավառներն էլ առանձին-առանձին ունեն իրենց գլխավոր և երկրորդական հերոսները, իրենց դրական և բացասական հատկանիշներով, ուսանելի կամ պախարակելի կողմերով։ Մի խոսքով՝ Բուզանդի վիպականացած պատմության մեջ ասպարեզ են գալիս ժամանակի հոգևոր ու աշխարհիկ գրեթե բոլոր գլխավոր դեմքերը՝ կաթողիկոս Ներսես Մեծը, Արշակ II թագավորը, պանծալի զորավարներ Վաչե, Վասակ, Մուշեղ Մամիկոնյանները և էլի ուրիշ շատ հերոսներ, որոնց մտածողության, բարքերի, կենցաղային սովորությունների, ապրելակերպի, բնավորության, անհատական փոխհարաբերությունների և այլ ու այլ հարցերի մասին խոսելով, պատմիչն ամբողջացնում է IV դարի Հայաստանի մասին իր ասելիքը։ Եվ եթե այսօր մենք V դարի հայ հեղինակներից միայն Բուզանդի մոտ ենք հանդիպում Հայաստանի ներքին կյանքին վերաբերող տեղեկությունների, ապա դրա պատճառը պետք է փնտրել միայն այն բանի

մեջ, որ նա մեծ չափով հենվել է ժողովրդական ստեղծագործությունների վրա և շնորհալի կերպով օգտագործել դրանք։

Հայոց եկեղեցու և եկեղեցական գործիչների մասին խոսելիս Փավստոս Բուզանդը մեծ տեղ է տալիս հատկապես կաթողիկոս Ներսեսի գործունեությանը, շմոռանալով նրա անձնավորությունն ու հոգևոր աշխատանքը գունազարդել բազմաթիվ վիպականացած պատումներով ու տեսիլքներով։ Մեր պատմիչը (հավանաբար նաև նրան պատմողները) այնքան է տարված Ներսեսի կերպարով, որ երբեմն նրան է վերագրում չեղած և կամ ուրիշ երկրներում ու ուրիշների հետ պատահած դեպքեր ու պատմություններ։ Ներսեսը Փավստոսի մոտ դուրս է բերված որպես հոգևորականի մի իդեալական կերպար։ Նա բոլորի հոգևոր հայրն է, աղքատների ու հիվանդների հովանավորը, երկրի օրենսդիրը, ամուսնական սովորույթների կարգավորողը, քրիստոնեության ոգուն խորթ հեթանոսական բարքերի ու մնացորդների ոչնչացնողը, հոգեվորականների և մյուսների համար հունարեն և ասորերեն լեզուներով դպրոցներ բաց անողը և այլն։ Ինչպես ուրիշ դեպքերում, այստեղ նույնպես Փավստոսը որպես ջերմեռանդ հավատացյալ, Հայոց եկեղեցու ու նրա սպասավորների մեծ մասի մոտ բացասական հատկանիշներ չի տեսնում, ուստի և նրանց նկատմամբ քննադատական որևէ հակում հանդես չի բերում։ Դեռ ավելին. նա հանդես է

գալիս որպես հայկական եկեղեցու հիմքերի ամրապնդման ջատագով, եկեղեցու և հայ հոգևորականության իրավական ու տնտեսական արտոնությունների մոլի պաշտպան։ Հենց այստեղից էլ բխում է նրա անհանդուրժողությունը պետական ու քաղաքական այն գործիչների նկատմամբ, ովքեր հայկական ֆեոդալական միապետության կենտրոնացման ու ամրապնդման շահերից ելնելով փորձում էին որոշ չափով սահմանափակել եկեղեցու և հոգևորականության իրավունքները։ Բուզանդը մեկն էր շատերից, որը իր ժամանակ զրադաշտական Պարսկաստանի գաղափարախոսությանը, նվաճողական ու ձուլելու քաղաքականությանը պարտավոր էր հակադրել հայկական, ուրեմն և քրիստոնեական գաղափարախոսությունը։ Ուստի, քրիստոնեության ազդեցությունը մեծացնելու համար, պատմիչը չէր կարող խուսափել դեպքերի և դեմքերի վիպականացումից և չափազանցություններից։

Հին հայկական ժողովրդական վեպերից մի քանիսը մեզ են հասել նաև Մովսես Խորենացու միջոցով։ Այդ վեպերը այս կամ այն չափով արտացոլում են ամենահեռավոր ժամանակներից սկսած մինչև մեր թվականության II դարի պատմական դեպքերը։ Բայց այստեղ առասպելի ուժն այնքան մեծ է, որ դժվար է որոշել պատմականն ու ոչ պատմականը։ Մովսես Խորենացու գրի առած վեպերից հետո, հայկական ժողովրդական երկրորդ

վեպը «Պարսից պատերազմն» է, որ մեզ է հասել Փավստոս Բուզանդի միջոցով։ Այս վեպի ամբողջ առանցքը հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարի պատմությունն է Սասանյան Պարսկաստանի դեմ։ Այն ստեղծված լինելով ընդամենը մեկ դար կամ մի քիչ ավելի ժամանակ առաջ մեր պատմիչի ապրած ժամանակաշրջանից, իր մեջ հիմնականում բովանդակում է III—IV դարերի պատմական իրականությունը։ Դրա համար էլ այստեղ երկրի ներքին կյանքին ու որոշ եղելություններին վերաբերող փաստերը պատմական լինելուց բացի, պատմական են նաև համարյա բոլոր գործող անձինք։

Տրդատ III-ի հաջորդ Խոսրով Կոտակի գահակալության և Վաչե Մամիկոնյանի սպարապետության տարիներին, Պարսկաստանի նվաճողական հակումները Հայաստանի նկատմամբ չէին դադարում։ Սակայն թշնամու բանակների հարձակումներն ամեն անգամ մեծ հաջողությամբ ետ էին մղվում հայերի կողմից։ Խոսրովը թշնամու դեմ կռիվներ մղելու հետ միաժամանակ, զբաղվում էր նաև երկրի ներքին կյանքով։ Նա մի կողմից արյունալի դատաստան էր տեսնում երկրի ներսում պառակտում սերմանող կամ թշնամու հետ համագործակցող նախարարների հետ, իսկ մյուս կողմից ձեռնարկում շինարարական ընդարձակ աշխատանքներ։ Բազմաթիվ նախարարների ու իշխանների մեջ Խոսրով թագավորը առանձին վստահություն էր տածում բազմավաստակ ու քաջարի զորավար Վաչե Մամիկոնյանի նկատմամբ։ Եվ, եթե Խոսրովը խոշոր նախարարներին միշտ պահում էր արքունիքում և թույլ չէր տալիս այնտեղից հեռանալու, իր դեմ չապստամբվելու կամ թշնամուն չմիանալու համար, ապա Վաչեի հետ նա այդպես չէր վարվում։ «(Նա) բոլոր ավագ նախարարական տների զորքերը,— գրում է պատմիչը,— գումարում էր արքունի զորքերի հետ և ամբողջ գումարտակը տալիս էր սրանց (Վաչե Մամիկոնյանին և Վահան Ամատունուն— Ս. Մ—Բ.) ձեռքը, և սրանք շարունակ քաջաբար պատերազմում էին Պարսից սահմաններում և թույլ չէին տալիս դյուրությամբ մտնել ու ավերել Հայոց երկիրը»[1]։ Վաչե Մամիկոնյանը ոչ միայն հայրենիքին ու ժողովրդին նվիրված ուժերին էր առաջնորդում դեպի հաղթական պատերազմներ, այլև նա, իր հավատարիմ հետևորդներով, ջերմորեն պաշտպանում էր երկրի միասնության համար Խոսրովի ամեն մի ձեռնարկում։ Վաչեի ձեռքով են պատժվում պարսիկների կողմն անցած Դատաբեն Բզնունին և Աղձնիքի բդեշխը։ Վաչե Մամիկոնյանը մեծ վաստակ ուներ նաև երկրի ներսում կատարվող շինարարական աշխատանքների մեջ։ Հայոց սպարապետի ջանքերով էր, որ 330-ական թվականներին ողջ երկրից Արարատյան դաշտում հավաքվեցին մեծ թվով մարդիկ և կարճ ժամանակամիջոցում տնկեցին

1 Փավստոս Բուզանդ, *Հայոց պատմություն*, էջ 98։

այն նշանավոր արհեստական անտառը, որն սկսվում էր Գառնիի մոտագայթից ու հասնում մինչև Դվին ու Արտաշատ, մինչև Արաքսի ափերը։ Հենց այդ ժամանակ էլ Արտաշատից ոչ հեռու հիմնադրվում է Հայաստանի նոր մայրաքաղաքը՝ Դվինը։

Վաչե Մամիկոնյանը հերոսի մահով ընկնում է մարտում։ Որոշ ժամանակ անց, մեռնում է նաև Խոսրով թագավորը։

Ավելի հետաքրքրական ու բաղմաբովանդակ է Խոսրովի հաջորդ՝ Տիրանի վեպը։ Տիրանի օրոք ևս պարսիկները չեն դադարեցնում իրենց արշավանքները Հայաստանի վրա, բայց, ինչպես միշտ, այս անգամ էլ նրանք ջախջախվում ու ետ են շպրտվում Հայաստանի սահմաններից։ Բայց պարսիկները ի վերջո կարողանում են դավադրությամբ ու խաբեությամբ կալանավորել ու իրենց հետ Պարսկաստան տանել Հայոց թագավոր Տիրանին։ Դրանից հետո ժողովրդին ու հայրենիքին նվիրված ուժերի վրեժխնդրությունը ավելի է մեծանում և թշնամու դեմ պայքարը ավելի սուր բնույթ ընդունում։ Այժմ պարսիկների դեմ պայքարը ղեկավարում էին Անդոկ Սյունին և Արշավիր Կամսարականը։ Հայերին այս անգամ հաջողվում է հռոմեացիների օգնությամբ ջախջախել պարսկական բանակը, նրանք «...սրի բերան տվին,— ասում է մեր պատմիչը,— ոչ մեկին կենդանի չթողին։ Բանակը կողոպտեցին, ավար առան, բռնեցին թագավորի կանայանց... նրանց բոլոր գույքն ու ստացվածները,

գանձերը, պաշարեղենը, սարքը կանանց հետ միասին գերի վերցրին»[1]։ Այս պարտությունը հարկադրում է պարսիկներին ետ ուղարկել հայոց թագավորին։ Բայց թշնամիները նույնիսկ այս դեպքում էլ մնում են նենգ ու զազրելի. նրանք Տիրանին վերադարձնում են երկու աչքերից կուրացած։ Դրանից հետո Տիրանին հաջորդում է նրա որդի Արշակ II-ը։

Ներսես Մեծը Բուզանդի հոգևոր պատմության կենտրոնական դեմքն է, որի պատճառով էլ տեսիլքների, ավանդությունների ու կրոնական պատմությունների մեծ մասը հորինվում է նրա շուրջը, իսկ Արշակ II-ը՝ արքունական տան պատմության գլխավոր հերոսը։ Բուզանդի հերոսներից ամենից շատ Արշակի կերպարն է հագեցված խորը դրամատիզմով և նա պատմիչի գրչի տակ դարձել է կես իրական, կես վիպական մի անձնավորություն, որը որպես Հայաստանի գերագույն իշխանավոր, մարմնավորում էր այն ժամանակվա ազատագրական պայքարը նենգամիտ ու դավադիր թշնամիների դեմ։ Որպես քաջ ու կորովի մի տղամարդ, Արշակը որպես կանոն, կռիվների մեջ միշտ առջևումն էր։ Նրա քաջությունն ու անվախությունը ոգևորում և մարտի էին տանում զորքին ու ժողովրդին։ Դրա հետևանքով միջին դարերում ազատագրական մոտիվներով հորինվող ժողովրդ-

1 Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, էջ 128։

դական զրույցներն ու պատմությունները բնականաբար պետք է մեծ մասամբ վերաբերվեին սիրված դյուցազնին՝ Արշակին և նրան դարձնեին ժողովրդական վեպի կենտրոնական դեմքը։ Կարծում ենք, որ Բուզանդի ու նրա ժամանակակիցների մոտ Արշակը միայն իր անձնական քաջության և բարեմասնությունների համար չէ որ այդքան մեծարվել է։ Պատմիչի վկայություններից մենք տեղեկանում ենք, որ Արշակը ընդհանրապես խելացի պետական գործիչ էր, մի հանգամանք, որ կարևոր դեր է կատարել նրա վիպականացման համար։ Արշակ II-ը հայ Արշակունի թագավորների մեջ այն քչերից մեկն էր, որ հսկայական ջանքեր գործադրեց ֆեոդալական ցրվածությունը վերացնելու, խոշոր ֆեոդալների ու հայ նախարարների իրավունքները սահմանափակելու և ուժեղ, կենտրոնացված հայկական պետություն ստեղծելու համար։ Արշակ II-ի բոլոր ձեռնարկումները ուղղված էին այդ նպատակի իրականացմանը և դրանք ըստ էության իր ժամանակի համար ունեին առաջադիմական նշանակություն։ Ուժեղ և կենտրոնացված պետության ստեղծման ճանապարհին նախարարների իրավունքները սահմանափակելիս, Արշակ II-ը որոշ հանգամանքներում հենվում էր նաև ժողովրդի վրա ու երբեմն նրան պաշտպանում կենտրոնական իշխանության հակառակորդ ֆեոդալների կամայականություններից։ Այստեղից էլ պարզ է այն, թե ինչո՞ւ IV—V դարերում Արշակը պետք է դառնար

ժողովրդական բանահյուսության, վեպի ու վիպասանության կենտրոնական դեմքերից մեկը։

Բուզանդի մոտ, ուրեմն և բուն ժողովրդական բանահյուսության մեջ, Արշակ II-ը որպես վիպական հերոս, հանդես է գալիս խորապես մարդկային գծերով, ընդգծված կամքի ուժով, մարդկային թուլություններով հանդերձ։ Այսպես, օրինակ, մի անգամ նա հավատում է Տիրիթի բամբասանքներին ու սպանել է տալիս իր հարազատ եղբորորդուն՝ Գնելին, մի ուրիշ անգամ զգալով իր սխալը՝ պատժում է նաև Տիրիթին ու սպանում նաև սրան։ Արշակ II-ի շուրջը ստեղծված ամբողջ պատմությունը հանգեցվում է տրամաբանական այն եզրակացության, որ Արշակը քաջ էր ու հերոս, որովհետև նրա հետ էր մի ամբողջ ժողովուրդ, որ խորապես գիտակցելով իր պայքարի արդարացիությունը, հետևում էր իր սիրած հերոսին ու ահեղ պայքարում հաղթում թշնամուն։ Հերոսի ու ժողովրդի, հերոսի ու հայրենիքի այդ փոխադարձ կապը բանահյուսության մեջ արտահայտված է կատարյալ վիպական ձևով։ Բանակցությունների համար Պարսկաստան կանչված Արշակ II-ին փորձելու ու նրա իսկական մտադրություններն ստուգելու համար Շապուհը գաղտնի կարգադրում է հանդիպման համար պատրաստված հարկաբաժնի հատակի կես մասը պատել Հայաստանից բերված հողով։ Եվ ահա երկու թագավորների զրույցի ժամանակ, երբ Արշակը կանգնում է հատակի այն

մասի վրա, որտեղ հող չէր լցված, խեղճանում, թուլանում է և մեծարանքով ու հարգանքով դիմում իր խոսակցին, իսկ երբ կանգնում է Հայաստանի հողով ծածկված մասի վրա, խրոխտանում, ուժ է ստանում ու սպառնում Շապուհին ամենավիրավորական խոսքերով։ Դաղտված Շապուհը դրանից հետո շղթայել է տալիս Արշակին ու բանտարկում Անհուշ բերդում։

Վերին աստիճանի հոգեբանական ու ճշմարտացի, բայց միաժամանակ խիստ ողբերգական պատկեր ունի նաև Արշակ II-ի մահվան նկարագրությունը։ Պարսկաստանի այդ հեռավոր ու դաժան զնդանում մի անգամ կյանքը անսպասելիորեն ժպտում է հայոց թագավորին։ Շապուհի թույլտվությամբ Արշակին տեսակցության է գալիս նրա ամենասիրելի անձնավորություններից մեկը՝ Դրաստամատը։ Վերջինիս պահանջով Արշակին հանում են զնդանից, մաքրում կեղտից, հագցնում թագավորական դգեստները և բերում մի ճոխ սեղանի մոտ։ Դրաստամատը ամենահոգատար ձևով հյուրասիրում ու հատուկ նվագածուների միջոցով ուրախացնում է Արշակին։ Այս ուրախությունը, սակայն, կարճատև պետք է լիներ, որովհետև Դրաստամատը կրկին պետք է հեռանար նրանից։ Մեր հերոսը խմանալով, որ շուտով վրա է հասնելու բաժանման տխուր ժամը, դանակը խրելով իր սիրտը, անշնչանում է խնջույքի սեղանի մոտ, իր սիրելի Դրաստամատի աչքերի առաջ։ Դրաստամատին ոչինչ չէր մնում անել, քան նույն դանակով ինքնասպան լինել։

Այս վեպը ոչ միայն հայկական, այլև համաշխարհային գրականության մեջ համարվում է ժողովրդական ստեղծագործության անգնահատելի գանձերից մեկը, այն խորապես մարդկային է, արտահայտում է վսեմ ու բարձր գաղափարներ և փայլում ամենաջերմ հայրենասիրությամբ։ Այստեղ, հակառակ Շապուհ II-ի, որ հանդես է գալիս որպես չար ու հետադիմական ուժերի խտացած պատկեր, որն իր մտադրություններն իրագործելու համար կանգ չի առնում ոչ միայն ամենախարդախ և ամենազզրելի գործողությունների առաջ, այլև դրժում է իր արքայական խոսքն ու երդումը, Արշակ II-ը արդարամիտ է, հերոս, ազնիվ, որը սակայն զոհ է գնում չարության ու անարդարության ուժին։ Վեպի ամբողջ բովանդակությունը զարգանում է այնպես, որ ընթերցողի համակրանքը միշտ էլ Արշակի կողմն է, որ նա ոչ միայն խոր ատելությամբ է լցվում չարի ու անարդարության նկատմամբ, այլև հավատում բարու, արդարության և ժողովրդի հաղթանակին։ Որքա՜ն գեղեցիկ ու վսեմ է վեպի բովանդակությունը։

Հայոց թագավոր Արշակ II-ի եղերական վախճանից հետո պարսիկների նորանոր հարձակումներից Հայաստանի պաշտպանությունը իր ձեռքն է վերցնում զորավար Վասակ Մամիկոնյանի որդի Մուշեղը։ Տաղանդավոր զորավարը երկրի պաշտ-

պանության հետ մեկտեղ հոգ է տանում նաև Արշակի կնոջ՝ այրիացած Փառանձեմ թագուհու նկատմամբ։ Վեպում բազմաթիվ հերոսների մեջ Փառանձեմը միակ առաջատար դեր խաղացող կին հերոսն է։ Այստեղ Փառանձեմը հանդես է գալիս որպես հասարակական ակտիվ գործիչ, որը ամուսնու կորուստից հետո իր մեջ խեղդելով վշտի ծանր զգացումը, մեծ եռանդով շարունակում է կառավարել պետությունը։ Հայկական մատենագրության մեջ առաջին անգամ Բուզանդի մոտ ենք հանդիպում մի կնոջ, որին կյանքում հատկացված է տղամարդուն հավասար տեղ։ Փառանձեմը միայն պալատական անհոգ ու շռայլ կյանքը վայելող անձնավորություն չէ, դժբախտության և վտանգի պահին նա ոչ թե հուսահատվում ու ենթարկվում է ճակատագրի քմահաճույքին, այլ կամքի մեծ ուժով և տոկունությամբ դուրս է գալիս անարգարության դեմ, կազմակերպում ու ղեկավարում հայասեր ուժերին և փորձում դժվարությունների հաղթահարման ճանապարհով փրկության ելք գտնել։ Սակայն ուժերը անհավասար էին։ Պարսկական բանակները այլևս հաշվի չառնելով իրենց կրած հսկայական կորուստները, ներխուժում են Հայաստանի կենտրոնական շրջանները և երկարատև պաշարումից հետո, գրավում նաև հրաշակավոր Արտագերս բերդը, որտեղ ամրացած էր Փառանձեմը։ Փառանձեմը գերության մեջ էլ իրեն պահում է արժանավայել կերպով, արհամարհելով

ամեն կարգի խոշտանգումները, նա մեռնում է հերոսաբար, առանց գլուխ խոնարհելու անարգ թշնամու առաջ։ Փառանձեմը հայ կնոջ հերոսական կերպարն է։ Նրանով ոգեշնչվել ու նրան են ձգտել նմանվել հետագա սերունդների շատ ու շատ ներկայացուցիչներ։

Պարսկական զորքերի կատարած չարագործությունները ու թագուհու կորուստը բորբոքում է ողջ ժողովրդի զայրույթն ու նրան ոտքի հանում թշնամու դեմ։ Պայքարի այս շրջանում վճռական դերը պատկանում էր Մուշեղ Մամիկոնյանին, որի ղեկավարությամբ պարսիկները ջախջախվում և արտաքսվում են Հայաստանից։ Սակայն հարցը միայն դրանով չի վերջանում. անհրաժեշտ էր նաև լուծել Արշակունիների գահաժառանգության հարցը։ Եվ ահա, Մուշեղի ջանքերով Բյուզանդիայից Հայաստան է բերվում Արշակ II-ի միակ ժառանգ Պապը, որը ստանձնում է հոր իշխանությունը։

«Պարսից պատերազմը» ժողովրդական վեպի ամենահետաքրքիր ու պատմագիտական առումով ամենաարժեքավոր մասերից մեկն էլ Պապի ճյուղն է, չնայած ինքը Պապը վեպում ներկայացվում է ամենաբացասական ու մռայլ գույներով։ Այս հանգամանքի պատճառը հասկանալու համար անհրաժեշտ ենք համարում գոնե ընդհանուր գծերով ծանոթանալ Արշակ II-ի արժանավոր հետնորդի պետական գործունեությանը, որը դժբախտաբար շատ կարճատև կյանք ունեցավ։

Պատմությունից մեզ հայտնի է, որ Պապը իշխանության գլուխ անցավ միջազգային հարաբերությունների չափազանց լարված իրադրության պայմաններում՝ 369 թվականին, երբ նա ընդամենը 16—18 տարեկան էր։ Սակայն անկա՛խ որևէ հանգամանքից, հայոց թագավորը հենց սկզբից իրեն դրսևորեց որպես պետական խոշոր գործիչ, •ժտված վարչական, ռազմական, դիվանագիտական բարձր հատկանիշներով։ Նա մեծ ինքնավստահությամբ իր ձեռքը վերցնելով երկրի կառավարման ղեկը, համարձակորեն առաջ շարժվեց այն ճանապարհով, որ նշել էր Արշակ II-ը։ Պապը լավ ըմբռնելով ստեղծված միջազգային իրադրության ամբողջ բարդությունը և առաջին հերթին ելնելով հայկական պետության շահերից, երկրի ներսում վարում էր պետության խիստ կենտրոնացման քաղաքականություն, ձգտելով բարձրացնել Հայաստանի հեղինակությունն ու դերը։ Օտար տերությունների հետ Պապը վարում էր խաղաղասիրական քաղաքականություն, ամեն կերպ աշխատելով խուսափել պատերազմներից ու անտեղի բարդություններից։ Իր կարճատև գահակալության ընթացքում նա հնարավոր բոլոր միջոցները գործադրեց այդ քաղաքական գծի պահպանման համար։ Նա, հենվելով երկրի առաջադիմական ու հայրենասիրական ուժերի վրա, հեշտությամբ կարողանում էր ասպարեզից վերացնել թագավորական իշխանության հակառակորդներին ու թշնամի-

ներին։ Իր դիրքերն ամրացնելու, ինչպես նաև երկրի ներքին ու արտաքին քաղաքականության հարցերը լուծելու համար Պապը ամենից առաջ ստեղծեց ուժեղ բանակ, որի հենց միայն հեծելազորի թիվը հասնում էր 90 հազարի։ Այս բանակի միջոցով Պապը ոչ միայն կարողանում էր հաջողությամբ ետ մղել պարսկական հարձակումները, այլև սանձահարել ու հպատակեցնել դավաճան կամ կենտրոնախույս տրամադրություններ ունեցող նախարարներին։ Այս գործողությունների ընթացքում Պապի դեմ խիստ թշնամաբար տրամադրված մի քանի նախարարական տներ նույնիսկ ամբողջովին բնաջնջվեցին և նրանց կալվածքները բռնագրավվեցին։ Պետությունը կենտրոնացնելու և նրա եկամուտներն ավելացնելու համար Պապը որոշակի քաղաքականություն սկսեց նաև եկեղեցու և հայկական հոգևորականության նկատմամբ։

Թեև քրիստոնեության ընդունումից անցել էր ընդամենը մի քանի տասնամյակ, սակայն պատմական համեմատաբար այս կարճ ժամանակամիջոցում հայոց եկեղեցին իր ձեռքում կենտրոնացնելով հողային ընդարձակ տարածություններ, բազմաթիվ տնտեսական օբյեկտներ ու մեծ քանակությամբ գյուղեր իրենց բնակիչներով, դարձել էր ֆեոդալական մի ուժեղ կազմակերպություն։ Տնտեսական տեսակետից ուռճանալու հետ մեկտեղ, տարեցտարի ընդարձակվում էին նաև եկեղեցու ու հոգևոր դասի իրավունքներն ու արտոնու-

թյունները։ Հայոց եկեղեցու ձեռքում էր գտնվում օրենսդրության և դատավարության իրավունքը, եկեղեցին ժողովրդից գանձում էր հատուկ հարկեր և այլն։ Այս բոլոր ինքնուրույնության մեծ հնարավորություններ էին ստեղծում որպեսզի երկրի ու ժողովրդի հարստության մի զգալի մասը կենտրոնանա եկեղեցու և հոգևորականության ձեռքին։ Հայկական եկեղեցին և հոգևորականությունը, հենվելով իրենց տնտեսական հզորության վրա և ելնելով այն իրավունքներից, որ ունեին, արդեն IV դարում որոշակի փորձեր էին կատարում դուրս գալու կրոնական, եկեղեցական շրջանակներից և ղեկավար դեր կատարելու նաև երկրի կառավարման գործում։ Մի կողմից եկեղեցու և հոգևոր դասի տնտեսապես հզորանալը, մյուս կողմից նրանց հակումները աշխարհիկ գործերի նկատմամբ, IV դարում ուժգնորեն սրում են աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների փոխհարաբերությունները, մի երևույթ, որ հատուկ էր ոչ միայն Հայաստանին, այլև բոլոր այն երկրներին, որոնք անցել են ֆեոդալիզմի զարգացման որոշակի շրջանները։ Հասկանալի է, որ այսպիսի պայմաններում Պապը որպես աշխարհիկ ֆեոդալական հիերարխիայի ամենաբարձրը աստիճանի վրա կանգնած անձնավորություն, ոչ միայն չէր կարող ներդասային այս պայքարից հեռու մնալ, այլ ընդհակառակը, նա պետք է ակտիվ ու ներգործող միջոցների դիմեր իր իշխանությունն ու իր դասի շահերը պաշտպանելու համար։

Եվ ահա 370-ական թվականների հենց սկզբներին Պապը իր մի շարք օրենքներով համարձակորեն սկսեց սահմանափակել հայկական եկեղեցու և հոգևորականության իրավունքները։ Ելնելով աշխարհիկ ֆեոդալների և կենտրոնացած պետության շահերից, Պապը մեծ հաստատակամությամբ սկսեց արմատապես սահմանափակել եկեղեցու և հոգևորականության իրավունքները։

Առաջին քայլը, որ կատարեց Պապը, դա եկեղեցական հողերի բռնագրավումն էր։ Պապի հատուկ օրենքով եկեղեցական հողերի յոթ բաժնից հինգը բռնագրավվեց։ Եկեղեցուց խլված հողերի մի զգալի մասը որպես վարձատրություն նա տալիս էր բանակում ծառայող զինվորներին։ Հողերի բռնագրավման մասին օրենքին հաջորդեց մեկ ուրիշ՝ եկեղեցուն տրվող տասանորդի վերացման, օրենքը։ Այս երկու միջոցառումներն էլ տնտեսապես զգալիորեն թուլացնում էին և՛ եկեղեցուն, և՛ եկեղեցական դասին։ Եկեղեցու տնտեսական իրավունքների սահմանափակումից հետո Պապը հրապարակեց նաև մի այլ օրենք, որով խստորեն կրճատվում էր հոգևորականների թիվը. թագավորի հրամանով շուտով փակվեցին բազմաթիվ վանքեր, մենաստաններ, կուսանոցներ և եկեղեցական կարգի այլ հաստատություններ, որոնց շուրջը ժամանակի ընթացքում հավաքվել էր շարտադրող, բայց նյութական բարիքները խժռող մի հսկայական բազմություն։ Հոգևոր պարտակա-

նություններից ազատված և թվարկված հաստատություններից հեռացված մարդկանց ուղարկում էին հանրօգուտ աշխատանքի կամ վերցվում զինվորական ծառայության։ Պապի այս ձեռնարկումները ոչ միայն ամրացրին թագավորի և աշխարհիկ ֆեոդալական դասի իրավունքները, այլև մի քանի անգամ ավելացրին ու կենտրոնացրին պետության եկամուտները։ Պարզ է, որ այժմ ավելի մեծ հնարավորություններ ստեղծվեցին մեծ և ուժեղ բանակ պահելու, ամրություններ ու բերդեր կառուցելու և ընդհանրապես երկրի անվտանգությունը ավելի ապահով հիմքերի վրա դնելու համար։

Սակայն Պապն իր այս ձեռնարկումներով ամենևին էլ չէր հետապնդում եկեղեցին ոչնչացնելու կամ հոգևորականությանը ասպարեզից մեկ ընդ միշտ քշելու նպատակ, նա միայն ելնելով աշխարհիկ ֆեոդալների շահերից և ձգտելով ստեղծել ուժեղ ու կենտրոնացված պետություն, սահմանափակեց եկեղեցու իրավունքները և փաստորեն եկեղեցին խստորեն ենթարկեց պետությանը։ Ի՞նչ խոսք, որ Պապի այս ձեռնարկումները իր ժամանակին ունեին առաջադիմական հսկայական նշանակություն և ամբողջությամբ ելնում էին պետության ու ժողովրդի շահերից։ Այս բոլորից հետո միանգամայն հասկանալի է թե ինչու նրա շուրջը ստեղծված վեպի մշակմանը վճռականորեն միջամտել են եկեղեցու ներկայացուցիչները, որոնք խեղաթյուրելով իրականությունը, նրան ներկայացրել են որպես ամենաբացասական անձնավորություններից մեկը։ Իսկ վիպագրող Բուզանդը հավատարիմ իր սկզբունքին և գուցե ներքուստ գոհ վեպի այսպիսի ընթացքից, չի փոխել նրա բովանդակությունը և շարադրել է այնպես, ինչպես ինքը լսել է ուրիշ աղբյուրներից։

Պապի վերին աստիճանի ինքնուրույն քաղաքականությունը չէր կարող չանհանգստացնել Հայաստանի հարևաններին և առաջին հերթին հույներին ու պարսիկներին։ 374 թվականին Պապը հռոմեական պաշտոնյաների կողմից հրավիրվում է ճաշկերույթի ու դավադրաբար սպանվում։ Այսպիսով, հայոց երիտասարդ թագավորը զոհ գնաց Հայաստանի հզորացումը չհանդուրժող թշնամիներին իր ուժերի բուռն ծաղկման շրջանում։ Պապի մահից հետո փաստորեն Արշակունիների թագավորությունը զրկվելով փորձված ու խելոք մի ղեկավարից, արագորեն գնաց դեպի մասնատում և անկում։

Բուզանդի Պատմությունն ուշադրությամբ կարդալով կարելի է գալ այն եզրակացության, որ մեր հեղինակը իր գիրքը գրել է Մամիկոնյան նախարարներից մեկի պատվերով, Մամիկոնյանների փառքը գովերգելու համար։ Հայկական բազմաթիվ նախարարությունների մեջ մեր պատմիչի համակրանքը առանձնապես Մամիկոնյանների նկատմամբ, անկասկած, ունի պատմական հիմք։ Օտար նվաճողների ու ներքին պառակտիչների դեմ

իրենց անձնազոհ պայքարով, երկրի միասնության համար իրենց ուժերը չխնայող Մամիկոնյանները հայկական մյուս նախարարությունների մեջ վաղուց էին շահել առաջնությունը, որի համար էլ նախարարական դասի և հայ ազնվականության մեջ Մամիկոնյաններին վերաբերող պատումները անառարկելիորեն պետք է ավելի պայծառ լինեին։ Բուզանդի մոտ Մամիկոնյան տոհմի բոլոր զորավարները իսկական դյուցազուններ են, որոնց շուրջն էլ հյուսվում են այդ տոհմին վերաբերող վեպի առանձին ճյուղերը։

Մամիկոնյան տոհմի համարյա բոլոր ներկայացուցիչները իսկական հայրենասերներ, մարդասեր ու վեհանձն մարդիկ են։ Հայրենիքին վերաբերող կարևորագույն հարցերի լուծման ժամանակ նրանք միշտ առաջին շարքերումն են և իրենց ետևից են տանում ու գլխավորում առաջադիմական և հայրենասեր մյուս ուժերին։ Ինչպիսի ջերմությամբ, որ նրանք սիրում են իրենց հայրենիքն ու հայրենակիցներին, նույնպիսի ուժգնությամբ էլ նրանք ատում են բոլոր թշնամիներին։ Մամիկոնյանների համար չկա ավելի բարձր բան, քան պայքարել հայրենիքի համար, զոհվել հայրենիքի համար սուրը ձեռքին։ Սպարապետ Մանվել Մամիկոնյանը իր հիվանդության ժամանակ մեծ վիշտ էր ապրում ու զժգոհում իր ճակատագրից, որ ինքը մեռնում է տանը, անկողնու մեջ և ոչ պատերազմի դաշտում։ Վշտացած զորավարը բաց անելով իր մարմինը և ցույց տալով ճակատամարտերում ստացած բազմաթիվ վերքերի սպիները, դառնությամբ բացականչում է, թե ինչո՞ւ ինքը չի մեռնում կռվի դաշտում հայրենիքը պաշտպանելիս։ «Մանկությունից հետե ես պատերազմների մեջ եմ մեծացել,— ասում է նա,— ամեն վարք հանձն առա քաջությամբ, և ինչո՞ւ ես բախտ չունեցա պատերազմի մեջ մեռնելու, քան թե այսպես անասունի պես մեռնեի։ Որքան լավ կլիներ՝ եթե պատերազմի մեջ մեռնեի աշխարհի համար... Ո՜ւր էր թե ինձ վիճակվեր մեռնել մեր աշխարհի... մեր կանանց ու որդոց համար, աստվածապաշտ մարդկանց, եղբայրների, ընկերների և մտերիմ բարեկամների համար։ Ես շատ հանդուգն էի ինձ պահում (պատերազմների մեջ), բայց և այնպես ինձ վիճակվեց մեռնել վատթար մահով՝ անկողնում պառկած»[1]։

Վեպում Մամիկոնյանները ներկայանում են որպես իսկական զինվորականներ, պատրաստ՝ կատարելու երկրի գերագույն հրամանատարի՝ թագավորի հրամանները, ինչպես նաև բոլոր պայմաններում պաշտպանելու թագավորի անձը, հեղինակությունը և իշխանությունը։ Այս բանը վեպում ակնառու կերպով դրսևորվում է հետևյալ դեպքի մեջ. մի անգամ երբ Արշակ II-ը հատուկ հրավերով գտնվում էր Պարսկաստանում, Շապու-

1 Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, էջ 292։

հի ախոռապետը համարձակվում է անարգել նը-
բան ու վիրավորական խոսքեր ասել, Վասակը,
որ Արշակի անբաժան ուղեկիցն էր նման դեպքե-
րում, չի կարողանում հանդուրժել այդ անպատվու-
թյունը և սուրը մերկացնելով, տեղն ու տեղը գլե-
խատում է անարատավան պաշտոնյային։ Վասա-
կի ու Արշակի հետ տեղի ունեցած այս միջադեպը
խրախուսանքի է արժանանում նույնիսկ Շապուհի
կողմից։ «Իսկ Պարսից թագավորը երբ այս բանը
լսեց, —ասված է վեպում,— մեծ շնորհակալու-
թյուն հայտնեց Վասակ զորավարին, զարմանալով
նրա քաջասրտության և մեծ աներկյուղության
վրա»[1]։ Շապուհը, որ ի բնե չար, նենգամիտ ու դա-
վադիր մի անձնավորություն էր, իրականում չէր
կարող հանդուրժել Վասակի, իր հյուրի՝ նման
վարմունքը և այն էլ Պարսից արքունիքում, սա-
կայն նա ստիպված էր կեղծելու իրեն, որովհետև
այդ ժամանակ նրան խիստ պետք էր հայերի դա-
շինքը ընդդեմ Հռոմի։ Իսկ երբ ուրիշ պայմաններ-
ում մի քիչ ամրանում էր Պարսից թագավորի
ոտքի տակի հողը, երբ նա իրեն շատ թե քիչ ապա-
հով էր զգում, այն ժամանակ մտնում էր իր իս-
կական դերի մեջ, դառնում բռնակալ, դավադիր,
երդմնազանց ու անմարդկային։ Եվ ահա, քաջու-
թյունն ու խիզախությունը գովերգող Շապուհը
բանակցություններ վարելու պատրվակով իր մոտ

1 Փավստոս Բուզանդ, *Հայոց պատմություն*, էջ 183։

կանչելով Արշակին ու Վասակին, ամենևին չի
ամաչում վերջինիս շղթայակապ անել և նետել
գնդան։

Պարսկական աքսորում Վասակ Մամիկոնյանը
բարձր է պահում իր և իր տոհմի արժանապատ-
վությունը։ Շապուհը հրճվանքի մեջ, ծաղրելով
հայոց սպարապետին, դիմում է նրան հետևյալ
հարցումով. «Աղվե՛ս, այդ դո՞ւ էիր այն խանգա-
րիչը, որ այսքան տարի մեզ և քաջերին չարչարե-
ցիր, դո՞ւ էիր, որ այսքան տարի կոտորում էիր
արիներին (պարսիկներին, Ս. Մ.-Բ.). հիմա
ի՞նչպես պետք է իմ ձեռքից ազատվես. ես քեզ
աղվեսի մահով պիտի սատակեցնեմ»։ Վասակը ան-
վեհերորեն պատասխանում է. «Այժմ ինձ տեսնում
ես փոքր մարմնով և սուրս էլ վրաս չէ՝ իմ մեծու-
թյան չափը չիմացար, որովհետև մինչև այժմ ես
քեզ համար առյուծ էի, իսկ այժմ աղվես դարձա։
Բայց երբ ես դեռ Վասակ էի՝ ես հսկա էի. մի ոտս
մի լեռան վրա էր, մյուսը մյուս լեռան վրա. երբ
աջ ոտքիս վրա էի հենվում՝ աջ կողմի լեռը գե-
տին էի կոխում, երբ ձախ ոտքիս վրա էի հենվում՝
ձախ կողմի լեռն էի գետին կոխում»։ Շապուհը
կատաղած հարցնում է. «Չի՞ լինի ասես, այդ ի՞նչ
լեռներ են, որ դու տափն էիր կոխում»։ Այն ժա-
մանակ Վասակը շեշտակիորեն պատասխանում է.
«Երկու լեռներից մեկը դու էիր, մյուսը Հունաց
թագավորը. քանի որ ասված հաճ էր մեզ հետ՝
քեզ էլ էի գետին կոխում, Հունաց թագավորին

էլ... Հիմա ինչ ուզում ես՝ արա»[1]։ Շապուհը գալա-
զած, այլևս պատասխան չգտնելով, հրամայում է
Վասակի մորթը հանել, խոտով լցնել և տանել Ան-
հուշ բերդը ու կանգնեցնել Արշակ II-ի խցիկում։

Ֆեոդալիզմի ժամանակաշրջանի ու ֆեոդալա-
կան գաղափարախոսության արդյունք պետք է հա-
մարել վեպում բազմապիսի առիթներով ցուցա-
դրվող թագավորի՝ որպես «տիրոջ» և ազնվակա-
նությանը՝ որպես «ծառայի» փոխհարաբերություն-
ների արտացոլումը։ «Ծառա» ազնվականների
ամենամեծ և ամենանվիրական պարտականու-
թյունը «տեր» թագավորի հանդեպ՝ դա զինվորա-
կան պարտականության կատարումն էր իր տիրա-
պետության սահմաններից հավաքած զորքերի
հետ միասին։ Իսկ թագավորը զինվորական ծառա-
յության դիմաց իր հայատակներին տալիս էր հողեր
ու կալվածքներ։

Տիրոջ և ծառայի այսպիսի փոխհարաբերու-
թյուններ գոյություն ունեին նաև հայկական եկե-
ղեցու և հոգևորականության շրջանում։ Եթե թա-
գավորը համարվում էր աշխարհիկ կյանքում ամե-
նամեծ հողատերն ու ֆեոդալը, ապա եկեղեցական
բնագավառում ամենախոշոր հողատերը համար-
վում էր կաթողիկոսը։

Վեպում Մամիկոնյան նախարարները, զինվո-
րականներն ու զորավարները իրենց ծառայական

1 Փավստոս Բուզանդ, էջ 218։

պարտականությունների մեջ հայ Արշակունիների
հանդեպ հանդես են գալիս որպես ամենանվիրված
ու ամենապարտաճանաչ անձնավորություններ։
Նրանք այդ առումով ֆեոդալական Հայաստանի
ավատական վերնախավի ամենակատարյալ, ամե-
նաիդեալական դեմքերն են։ Տիրոջ ու ծառայի այդ
փոխհարաբերությունը, ֆեոդալական հիերարխիա-
յի այդ սրբագործված սովորույթը կամ ավելի ճիշտ՝
օրենքը պարտադիր էր բոլորի համար։ Բուզանդի
մոտ էլ կան դրվագներ, որոնք ներկայացնում են
անհավատարիմ ծառաներին պատժելու ահավոր տե-
սարաններ՝ ընդհուպ մինչև նախարարական ամ-
բողջ տոհմերի բնաջնջում և այլն։

Բուզանդի գրքում հայ նախարարների մեծա-
գույն մասը, և Մամիկոնյանները մասնավորապես,
փայլում է հոգու մաքրությամբ, ազնվությամբ ու
բարությամբ, որը երբեմն այնքան մարդկային է,
որ արտահայտվում է նույնիսկ թշնամու նկատ-
մամբ։ Ի՞նչպես կարելի է չհիանալ Բուզանդի գլ-
խավոր ու կենտրոնական հերոս Մուշեղ Մամիկոն-
յանով, երբ նա մեծահոգությամբ ու մարդասիրու-
թյամբ իր կողմից պատերազմի ժամանակ գերի
վերցված Շապուհի կանանց ետ է ուղարկում
Պարսկաստան, առանց մաղաչափ անգամ վիրա-
վորելու նրանց արժանապատվությունը։ Դա Մու-
շեղի մարդասիրական բարձր զգացմունքների հը-
րապարակային ցուցադրումը չէր միայն, այլ մի

ամբողջ ժողովրդի՝ հայ ժողովրդի բարոյական բարձր ոգու արտահայտությունն էր։

Փավստոս Բուզանդի մոտ հանդես են գալիս ոչ միայն հերոսներ ու դրական կերպարներ, այլև դավաճաններ, մորթապաշտներ, փառասերներ, ըստոր ու նվաստացուցիչ ձևերով հարստություն կուտակողներ։ Այս կարգի մարդիկ ավելի են ընդգծում դրական հերոսների կերպարները։ Բուզանդի գրքում բերված բացասական կերպարները իրենց բնավորությամբ, գործելակերպով, ձգտումներով ու ներքնաշխարհով իրար նման չեն։ Մերուժան Արծրունին, օրինակ, փառասեր է ծայրահեղ աստիճանի, որը ձգտում է բարձր դիրքի ու պաշտոնի, և իր մտադրությունների իրականացման համար կանգ չի առնում ոչ մի միջոցի՝ ընդհուպ մինչև դավաճանության առաջ։ Իսկ Հոհան եպիսկոպոսը հարստանալու համար պատրաստ էր կատարելու ամենաստոր ու նվաստացուցիչ գործողություններ։ «Նա թագավորների առաջ,— ասում է մեր պատմիչը,— ձեռների ու ոտների վրա ընկնելով շորեքթաթ էր տալիս, ուղտի նման կառաչում էր, ուղտի նման քալելով։ Կառաչելու ժամանակ միմի խոսք էր խառնում կառաչելու ձայնով ու ասում էր. «Ուղտ եմ, ուղտ եմ, թագավորի մեղքերը բառնում եմ, վրաս դրեք թագավորի մեղքերը, որ բառնամ»։ Իսկ թագավորները գյուղերի կամ ագարակների պարգևագիրներ գրելով ու կնքելով դնում էին Հոհանի կոնակի վրա իրենց մեղքերի փոխանակ։ Եվ այսպես՝ ուղտ լինելով ու մեղքեր բառնալով նա հայոց թագավորներից ձեռք բերեց գյուղեր, ագարակներ ու գանձեր։ Այսպիսի մարդ էր այս Հոհանը, որ իր բոլոր կյանքում վարակված էր ագահությամբ ու ժլատությամբ և ագահության պատճառով անարժան գործեր էր կատարում»[1]։

Եթե առաքինի, ազնիվ ու քաջ մարդկանց նկատմամբ Բուզանդը արտահայտում է իր սերը, համակրանքը ու հիացմունքը և նրանց կոչում ամենալավագույն ածականներով, ապա Մերուժանի, Հոհանի ու նրանց նմանների նկատմամբ նա ատող է ու անհանդուրժող, սրանց նա տալիս է վատ անուններ ու բացասական որակումներ։ Ե՛վ առաջինների, և՛ երկրորդների նկատմամբ գույները այնքան են խտացված, որ ընթերցողն անմիջապես անցնում է հեղինակ Բուզանդի կողմը ու համակվում և՛ նրա սիրով, և՛ նրա ատելությամբ, սիրելով հայրենիքն ու հայրենասերներին, ատելով հայրենադավներին ու վախկոտներին։

Փավստոս Բուզանդի աշխատությունը անցյալի գրական ժառանգության այն լավագույն նմուշներից մեկն է, որն այսօր ոչ միայն չի կորցրել իր պատմագիտական արժեքը, այլև բովանդակությամբ ու հայրենասիրական ջերմությամբ ուսանելի է նաև մեզ համար։

1 Փավստոս Բուզանդ, էջ 303—304։

Ս. Մելիք-Բախշյան

ՓԱՎՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴ

Խմբագիր՝ Կ. Թառոյան
Նկարիչ՝ Գ. Խուդիկյան
Գեղ. խմբագիր՝ Գ. Խուդիկյան
Տեխ. խմբագիր՝ Ն. Ախիրյան
Վերստուգող սրբագրիչ՝ Հր. Ղազարյան

ՎՁ 11626 Պատվեր 1253 Տիրաժ 2 000

Հանձնված է արտադրության 27/VI—1963 թ.
Ստորագրված է տպագրության 4/X—1963 թ.
Թուղթ՝ 70×92¹/₃₂, տպագր. 1,62=1,9 պայմ. մամ.,
հրատ. 1,5 մամ.
Գինը՝ 10 կ.

ՀՍՍՌ կուլտուրայի մինիստրության հրատարակչությունների և պոլիգրաֆ արդյունաբերության գլխավոր վարչության № 1 տպարան, Երևան, Ալավերդյան փողոց № 65